



ԳՅՈՒՄՐՈՒ ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ  
ՎՃԱՐՈՎԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԵՐԻ  
ԶԵՂՉՄԱՆ ԿԱՐԳ

**Հաստատվել է**

«Գյումրու մոր և մանկան ավստրիական

հիվանդանոց» ՓԲԸ տնօրենի

20.05.2021 թվականի թիվ 207 հրամանով

Տնօրեն Ս.Ա. Ավետիսյան

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ (այսուհետ՝ Հիվանդանոց) «Վճարովի բժշկական ծառայությունների գների զեղչման կարգով» (այսուհետ՝ կարգ) կարգավորվում են Հիվանդանոցի աշխատողներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու, աշխատողների և նրանց մերձավոր ազգականների համար առավել նպաստավոր բուժօգնություն ապահովելու պայմանները և այդ նպատակով Հիվանդանոցի բժշկական ծառայություններից Հիվանդանոցի աշխատողների համար զեղչեր սահմանելու կանոնները և որոշակի բացառությունները:

2. Սույն կարգը տարածվում է Հիվանդանոցի բոլոր աշխատողների վրա, ովքեր Հիվանդանոցում ունեն առնվազն 3 ամսվա աշխատանքային ստաժ:

Սույն կարգի շահառուներ են համարվում նաև սույն կարգով նախատեսված հանազամանքներ ունեցող Հիվանդանոցի աշխատողների մերձավոր հետևյալ ազգականները՝ հայրը, մայրը, ամուսինը (կինը), երեխաները և թոռները:

3. Սույն կարգով սահմանված Հիվանդանոցի աշխատողների և նրանց մերձավոր ազգականների համար զեղչերը հաշվարկվում են առանց ապրանքանյութական արժեքի ներառման:

#### **ԶԵՂՉԻ ՉԱՓԵՐԸ**

4. Սույն կարգով սահմանված պայմաններով Հիվանդանոցի աշխատողների և նրանց մերձավոր ազգականների համար սահմանվում է վճարովի բժշկական ծառայությունների գների զեղչման հետևյալ կանոնները՝ համաձայն Հիվանդանոցում աշխատողների աշխատանքային ստաժի.

1) Մինչև 2 տարվա աշխատանքային ստաժ ունեցող աշխատողների և նրանց մերձավոր ազգականների համար սահմանվում է վճարովի բժշկական ծառայությունների գների 10 տոկոս զեղչ:

2) 2-ից 5 տարիների աշխատանքային ստաժ ունեցող աշխատողների և նրանց մերձավոր ազգականների համար սահմանվում է վճարովի բժշկական ծառայությունների գների 15 տոկոս զեղչ:

3) 5-ից 10 տարիների աշխատանքային ստաժ ունեցող աշխատողների և նրանց մերձավոր ազգականների համար սահմանվում է վճարովի բժշկական ծառայությունների գների 20 տոկոս զեղչ:

4) 10-ից 20 տարիների աշխատանքային ստաժ ունեցող աշխատողների և նրանց մերձավոր ազգականների համար սահմանվում է վճարովի բժշկական ծառայությունների գների 40 տոկոս զեղչ:

5) 20 և ավելի տարիների աշխատանքային ստաժ ունեցող աշխատողների և նրանց մերձավոր ազգականների համար սահմանվում է վճարովի բժշկական ծառայությունների գների 50 տոկոս զեղչ:

#### **ԶԵՂՉԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

5. Սույն կարգով սահմանված Հիվանդանոցի աշխատողների և նրանց մերձավոր ազգականների զեղչերի մասին դիմումները քննարկելու և համապատասխան որոշում



կայացնելու համար Հիվանդանոցի տնօրենի կողմից կազմավորվում է «Վճարովի բժշկական ծառայությունների գների զեղչման հանձնաժողով»:

6. Հիվանդանոցի աշխատողների և նրանց մերձավոր ազգականների զեղչերի վերաբերյալ դիմումները ներկայացվում են «Վճարովի բժշկական ծառայությունների գների զեղչման հանձնաժողովին»՝ վճարման պարտավորության ծագման հաջորդող մեկ ամսվա ընթացքում:

7. Հիվանդանոցի աշխատողների մերձավոր ազգականների անունից զեղչերի մասին դիմումները ներկայացնելու իրավունքը Հիվանդանոցի աշխատողինն է:

8. «Վճարովի բժշկական ծառայությունների գների զեղչման հանձնաժողովը» երեք աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է դիմումատուի զեղչի հանգամանքերն ու չափերը և կայացնում որոշում:

9. «Վճարովի բժշկական ծառայությունների գների զեղչման հանձնաժողովի» որոշման հիման վրա Հիվանդանոցի տնօրենն արձակում է զեղչ տրամադրելու մասին հրաման:

10. «Վճարովի բժշկական ծառայությունների գների զեղչման հանձնաժողովն» իրավասու է Հիվանդանոցի աշխատողի կողմից բուժծառայությունների վճարման ենթակա (չզեղչված) մասի համար սահմանել մասերով վճարելու ժամանակացույց՝ մինչև երեք ամիս ժամկետով:

11. Բացառիկ դեպքերում «Վճարովի բժշկական ծառայությունների գների զեղչման հանձնաժողովն» իրավասու է քննարկել Հիվանդանոցի աշխատող չհանդիսացող բուժառուների զեղչերի մասին դիմումները՝ այդ մասին առաջարկություն ներկայացնելով Հիվանդանոցի տնօրենին: